ՀՍՍՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ԼԱՎՐԵՆՏԻ ԱՆԱՆՅԱՆ

Հետպատերազմյան տարիներին Սովետական Հայաստանի արդյունաբերության զարգացումն ուղեկցվել է նրա կառուցվածքի կատարելագործմամբ, ճյուղային և տարածքային տեղաբաշխման միակողմանիության հաղթահարումով, որակական ցուցանիշների դերի բարձրացմամբ։ Պատերազմի ավարտից հետո ինչպես ՍՍՀՄ-ում ամբողջությամբ վերցրած, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում ժողովրդական տնտեսության վերականգնման և հետագա առաջընթացի ապահովման համար անհրաժեշտ էր ինտենսիվ կերպով զարգացնել մեքենաշինությունը, էլեկտրաէներգետիկան, շինանյութերի, քիմիական արդյունաբերությունը։ 50-ական թվականներին ծանր արդյունաբերության մեջ առաջացան նոր արտադրություններ՝ կապված ատոմային էներգիայի ստացման և կիրառման հետ, երբ սկսվեց ավտոմատ, էլեկտրոնային և այլ տեսակի նոր տեխնիկայի թողարկումը։ Փոխվեց բուն մեքենաշինության կառուցվածքը, զանգվածային մասշտաբով արտադրվում էին նոր մեքենաներ ու սարքավորումներ։

Առաջադիմական տեղաշարժեր էին կատարվում նաև սպառման առարկաների արտադրության բնագավառում։ Հետպատերազմյան շրջանում լայն ծավալ ստացավ հեռուստացույցների, կենցաղային սառնարանների, լվացքի մեքենաների, ռադիոընդունիչների արտադրությունը։ Տեքստիլ արդյունաբերության մեջ առավել արագ տեմպերով զարգացավ մետաքսյա (գլխավորապես արհեստական մետաքսաթելից պատրաստված) գործվածքների արտադրությունը։ Ընդհանուր առմամբ հետպատերազմյան տարիներին և՛ երկրի, և՛ մեր հանրապետության արդյունաբերական արտադրության կառուցվածքը ավելի ընդլայնվեց ու հարստացավ։

Հանրապետության արդյունաբերության ճյուղային կառուցվածքի կազմավորման և փոփոխման վրա ազդել են մի շարք գործոններ, որոնցից են հումքային և աշխատանքային ռեսուրսների առկայությունը, գիտատեխնիկական առաջընթացի ծավալումը, մասնագիտացման և կոոպերացման աստիճանը, բնակչության պահանջմունքները, կապիտալ ներդրումների ռացիոնալ բաշխումը և այլն։ Եթե նախահեղափոխական Հայաստանի էկոնոմիկայի համար համեմատաբար կարևոր էին հումքային ճյուղերը, ապա հետպատերազմյան Հայաստանի արդյունաբերության կառուցվածքի տարբերիչ գիծը նրա համալիր բնույթն է։ Վերջինս հենվում է արտադրության միջոցներ և սպառման առարկաներ արտադրող, հայթայթող և վերամշակող արդյունաբերության բազմաթիվ ճյուղերի զուգակցման վրա։

Մինչև 50-ական թվականները հանրապետությունում արագ տեմպերով զարգացան էներգատար ճյուղերը և արտադրությունները, մինչդեռ վերջին շրջանում շեշտը դրվում է աշխատատար, նվազ էներգատար և քիչ նյութատար ճյուղերի զարգացման վրա։ Այդ մասին առանձնահատուկ ընդգծվեց «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղություններում» և «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին» ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1975 թ. ապրիլին ընդունած որոշման մեջ։

Ընդհանրապես արդյունաբերության ճյուղային կառուցվածքի վերլուծությունը կատարվում է տարբեր ցուցանիշների գծով ամեն մի ճյուղի տեսակարար կշռի հաշվարկման հիման վրա (ըստ արտադրանքի ծավալի, աշխատողների թվի և հիմնական արտադրական ֆոնդերի)։ Տեսակարար կշիռների փոփոխությունը համարվում է առանձին ճյուղերի զարգացման տարբերությունների արդյունք։ Նշվածներից առավել կարևորը առաջին ցուցանիշն է, որը համեմատաբար ճիշտ է բնութագրում յուրաքանչյուր ճյուղի դերը և նյութական բարիքների արտադրությանը նրա մասնակցության աստիճանը։

Կառուցվածքային տեղաշարժերի միտումները կարելի է բացահայտել միայն տևական ժամանակաշրջանում արդյունաբերության կառուցվածքի փոփոխությունների պատմատնտեսագիտական մանրակրկիտ վերլուծության հիման վրա։ Բանն այն է, որ ժամանակի կարճ հատվածում արդյունաբերության ճյուղերի միջև համամասնությունները կարող են կամ բոլորովին չփոխվել, կամ էլ փոփոխվել պատահական գործոնների ազդեցությամբ։ Այսպես, անբարենպաստ բնակլիմայական պայմանները առանձին տարիներին կարող են բացասաբար ազդել թեթև ու սննդի արդյունաբերության տարբեր ճյուղերը հումքով ապահովելու ընթացքի վրա և դրանով 'իսկ իջեցնել այդ ճյուղերի տեսակարար կշիռը արդյունաբերական արտադրության ընդհանուր ծավալում։ Մինչդեռ տևական շրջանում արդյունաբերության կառուցվածքային տեղաշարժերի ուսումնասիրումը ավելի ճիշտ ու լրիվ պատկերացում է տալիս այդ բարդ պրոցեսի վերաբերյալ։ Ելնելով նշված հանգամանքից, հանրապետության արդյունաբերության կառուցվածքային փոփոխությունները ներկայացնում ենք տևական կտրվածքով։

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ճյուղային կառուցվածքի տեղաշարժերն ըստ համախառն արտադրանքի ցուցանիշի։

Աղյուսակ № 1

Առանձին ճյուղերի տեսակարար կշիռը ՀՍՍՀ արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ[1]

Արդյունաբերության ճյուղերը	1950	1965	1970	1977
Ամբողջ արդյունաբերությունը	100	100	100	100
այդ թվում՝				
էլեկտրաէներգետիկա	3,7	2,6	3,3	3,3
Քիմիական և նավթաքիմիական արդյունաբերություն	5,9	13,2	12,1	10,6

[1] Աղյուսակը կազմված է «Промышленность Армянской ССР» (Ереван, 1964) և «Народное хозяйство Армянской ССР в 1977 году» (Ереван, 1978) ժողովածուների հիման վրա (տե՛ս համապատասխանաբար էջ 42 և 56)։

Մեքենաշինություն և մետաղամշակում	5.8	15,1	18,7	25,4
Անտառային, փայտամշակման և ցելյուլոզի—թղթի արդյունաբերություն	3,3	2,1	1,8	1,9
Շինանյութերի արդյունաբերություն	2,9	6,6	6,4	5,1
Ապակու և ճենապակու—հախճապակու արդյունաբերություն	0,1	0,2	0,2	0,5
Բեթև արդյունաբերություն	36,0	23,2	23,6	22,0
Սննդի արդյունաբերություն	37,7	30,1	27,1	23,2

Աղյուսակից երևում է, որ 1950—1965 թթ. ավելի քան կրկնակի անգամ բարձրացել է քիմիական և շինանյութերի արդյունաբերության տեսակարար կշիռը, սակայն ութերորդ հնգամյակից սկսած տեղի է ունեցել նշված ճյուղերի արտադրանքի տեսակարար կշիռների նվազում։ Դրան հակառակ 27 տարում 4,4—5 անգամ բարձրացել է մեքենաշինության և մետաղամշակման, ապակու և ճենապակու-հախճապակու արդյունաբերության տեսակարար կշիռը։ Բավականին կրճատվել է թեթև ու սննդի արդյունաբերության արտադրանքի բաժինը։ Եթե 1950 թ. այդ երկու ճյուղերը տալիս էին ՀՍՍՀ արդյունաբերության համախառն արտադրանքի 73,7 տոկոսը, ապա 1977 թ.՝ արդեն կեսից պակաս՝ 45,2 տոկոսը։ Փաստորեն 1970-ական թվականներից սկսած նշված ճյուղերը, չնայած զարգացման որոշակի տեմպերին, առանձին-առանձին վերցրած այլևս գերակշռություն չունեն արդյունաբերության ընդհանուր ծավալում, մինչդեռ մեքենաշինությունը և մետաղամշակումը զբաղեցնում է առաջին տեղը։

Արդյունաբերության կառուցվածքային փոփոխությունները անհրաժեշտ է քննարկել նաև ըստ աշխատողների տեսակարար կշռի։

Աղյուսակ № 2

ՀՍՍՀ արդյունաբերության առանձին ճյուղերի տեսակարար կշիռը ըստ բանվոր-ծառայողների թվի[2]

Արդյունաբերության ճյուղերը	1950	1965	1970	1975
Ամբողջ արդյունաբերությունը	100	100	100	100
այդ թվում՝				
Էլեկտրաէներգետիկա	1,3	2,2	2,5	2,0
Քիմիական և նավթաքիմիական արդյունաբերություն	...	8,4	8,6	6,9
Մեքենաշինություն և մետաղամշակում	15,3	30,0	35,9	39,4
Անտառային, փայտամշակման և ցելյուլոզի—թղթի արդյունաբերություն	8,1	3,5	2,8	2,5
Շինանյութերի արդյունաբերություն	11,7	9,4	8,9	7,5
Ապակու և ճենապակու—հախճապակու արդյունաբերություն	0,4	0,7	0,6	0,8
Բեթև արդյունաբերություն	32,8	26,9	25,6	25,2
Ամբողջ արդյունաբերությունը	13,5	10,2	9,0	8,8

---

2 Աղյուսակը կազմված է «Промышленность Армянской ССР» (Ереван, 1964) և «Народное хозяйство Армянской ССР в 1975 году» (Ереван, 1976) ժողովածուների հիման վրա (տե՛ս համապատասխանաբար էջ 55 և 60)։

Այստեղ ևս հիմնականում պահպանվել է նույն օրինաչափությունը՝ իջել է քիմիական, շինանյութերի, անտառային, փայտամշակման և ցելյուլոզի-թղթի, թեթև ու սննդի արդյունաբերության տեսակարար կշիռը։ Դրան հակառակ, բարձր տեմպերով (2,5 անգամ) աճել է մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերության տեսակարար կշիռը։ Ինչպես ցույց են տալիս բերված տվյալները, առավել աշխատատար ճյուղերն են մեքենաշինությունը և թեթև արդյունաբերությունը, որոնց իններորդ հնգամյակի ավարտին բաժին էր ընկնում արդյունաբերության աշխատողների թվի շուրջ երկու երրորդ մասը։

Քննարկվող ժամանակաշրջանում հանրապետության արդյունաբերության ճյուղային կառուցվածքի տեղաշարժերը հետաքրքրություն են ներկայացնում նաև հիմնական արտադրական ֆոնդերի կտրվածքով։

Աղյուսակ № 3

ՀՍՍՀ արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերի ճյուղային կառուցվածքը (տոկոսներով հանրագումարի նկատմամբ)[3]

Արդյունաբերության ճյուղերը	1955	1965	1970	1975
Ամբողջ արդյունաբերությունը	100	100	100	100
այդ թվում՝				
էլեկտրաէներգետիկա	32,5	27,5	25.5	24,6
Քիմիական և նավթաքիմիական արդյունաբերություն	13,0	15,4	16,0	13,2
Մեքենաշինություն և մետաղամշակում	9,9	17,4	19,3	21,3
Անտառային, փայտամշակման և ցելյուլոզի—թղթի արդյունաբերություն	2,0	1,4	1,5	1,8
Շինանյութերի արդյունաբերություն	4,2	6,4	8,5	7,8
Թեթև արդյունաբերություն	10,8	7,3	7,4	10,4
Սննդի արդյունաբերություն	13,3	9,3	9,2	10,7

Տվյալներից երևում է, որ քննարկվող ժամանակաշրջանում բավական իջել է էլեկտրաէներգետիկայի տեսակարար կշիռը, չնայած այդ ցուցանիշով ճյուղը դեռևս գրավում է առաջին տեղը։ Ավելի քան կրկնակի անգամ բարձրացել է մեքենաշինության և մետաղամշակման տեսակարար կշիռը։ Մինչև 1970 թ. կրճատվել է թեթև ու սննդի արդյունաբերության բաժինը, սակայն 9-րդ հնգամյակում նոր կարողությունների գործարկման շնորհիվ որոշ չափով բարձրացել է նշված ճյուղերի տեսակարար կշիռը։

Որոշակի ֆունկցիոնալ կապ գոյություն ունի արդյունաբերության առանձին ճյուղերի համախառն արտադրանքի և հիմնական արտադրական ֆոնդերի աճի տեմպերի ու դրանց տեսակարար կշիռների փոփոխությունների ցուցանիշների միջև։ Այլ հավասար պայմաններում որևէ ճյուղի արտադրանքի տեսակարար կշռի փոփոխությունը ուղիղ համեմատական է հիմնական արտադրական ֆոնդերի աճին։ Եթե տվյալ ճյուղի հիմնական արտադրական ֆոնդերի

[3] Աղյուսակը կազմված է «Промышленность Армянской ССР» (Ереван, 1973) և «Народное хозяйство Армянской ССР в 1975 году» ժողովածուների հիման վրա (տե՛ս համապատասխանաբար էջ 60 և 68)։

աճի տեմպերը ետ են մնում ամբողջ արդյունաբերության համապատասխան ցուցանիշից, ապա իջնում է նաև տվյալ ճյուղի արտադրանքի տեսակարար կշիռը։ Այսպես, օրինակ, թեթև ու սննդի արդյունաբերության հիմնական ֆոնդերն աճել են ավելի դանդաղ, քան ամբողջ արդյունաբերությանը, իսկ դրանց արտադրանքի տեսակարար կշիռը, ինչպես նշեցինք, իջել է։ Մինչդեռ մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերության ֆոնդերի տեսակարար կշռի բարձրացմանը զուգընթաց ավելացել է նաև ճյուղի համախառն արտադրանքի տեսակարար կշիռը։

Հանրապետության արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերի ճյուղային կառուցվածքը վկայում է ծանր ինդուստրիայի ճյուղերի ֆոնդատարության մասին։ Խոսքն առաջին հերթին վերաբերում է էլեկտրաէներգետիկային, ուր հիմնական արտադրական ֆոնդերի տեսակարար կշիռը մեծ չափով գերազանցում է թողարկված արտադրանքի և արդյունաբերական-արտադրական անձնակազմի տեսակարար կշիռներին։

Քննարկված ճյուղերից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում է ենթաճյուղերի. ինչքան լայն է ճյուղերի և արտադրությունների շրջանակը, այնքան բարձր է ներճյուղային բաժանման մակարդակը։

Եթե ճյուղային կառուցվածքի փոփոխման միտումների բացահայտման համար այդ կառուցվածքի վերլուծությունը նպատակահարմար է կատարել ըստ արդյունաբերության կոմպլեքսային ճյուղերի, ապա որակական փոփոխությունների բացահայտման համար կարևոր է ճյուղերի ներքին կառուցվածքի քննարկումը՝ հաշվի առնելով ռեգիոնալ առանձնահատկությունները։

Արդյունաբերության ճյուղային և ներճյուղային կառուցվածքի կատարելագործման խնդիրները սերտորեն առնչվում են էլեկտրաէներգետիկայի զարգացման հետ։ Չնայած ճյուղի զարգացման բարձր տեմպերին, մինչև 1965 թ. հանրապետությունում դրանք ետ էին մնում ամբողջ արդյունաբերության զարգացումից։ Այսպես, 1950—1965 թթ. ՀՍՍՀ արդյունաբերության արտադրանքի ծավալն աճել է 4,95 անգամ, մինչդեռ էլեկտրաէներգետիկայինը՝ 3,08 անգամ[4]։ Ութերորդ հնգամյակից սկսած էլեկտրաէներգետիկայի ներճյուղային կառուցվածքի փոփոխությունները բնութագրվում են ջերմաէլեկտրակայանների տեսակարար կշռի խիստ բարձրացումով, ինչպես նաև հետագայում նոր ենթաճյուղի՝ ատոմային էներգետիկայի ստեղծմամբ։ Եթե 1960 թ. հանրապետության բոլոր էլեկտրակայանների գումարային հզորության 95,4 տոկոսը, արտադրված էլեկտրաէներգիայի ավելի քան 98 տոկոսը բաժին էին ընկնում հիդրոէլեկտրակայաններին, ապա արդեն 1965 թ. դրանք համապատասխանաբար կազմում էին 61,2 և 55,5 տոկոս, իսկ 1977 թ.՝ 30,1 և 11,8 տոկոս[5]։

Տևական ժամանակ էներգիայի պակասը լրացնելու համար Հայկական ՍՍՀ-ն էլեկտրաէներգիա էր ստանում դրսից՝ անդրկովկասյան էներգասիստեմից, իսկ 1972 թ. սկսած, նոր կարողությունների գործարկման շնորհիվ, այն դարձավ երկրի էլեկտրաէներգիայի ավելցուկ ունեցող հանրապետություններից մեկը և սկսեց օգնել մյուսներին։

---

4 «Սովետական Հայաստանը 50 տարում», Երևան, 1970, էջ 56—57։

5 «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», էջ 66։

Հանրապետությունում վերջին շրջանում արդյունաբերության ոչ էներգատար ճյուղերի զարգացման միտումն է պատճառը, որ ժողովրդական տնտեսության այդ կարևոր ճյուղի արտադրանքի աճի տեմպերը գերազանցել են նրանում էլեկտրաէներգիայի սպառման աճին։ Այսպես, 1940—1975 թթ. արդյունաբերական արտադրության ծավալն աճել է 30,8 անգամ, մինչդեռ արդյունաբերության մեջ էլեկտրաէներգիայի սպառումը 17,2 անգամ, 1960—1975 թթ. համապատասխանաբար՝ 3,9 և 2,5 անգամ[6]։ Իսկ տասնչորրորդ հնգամյակում արդյունաբերության արտադրանքի աճը 16 տոկոսով գերազանցելու է ճյուղում էլեկտրաէներգիայի սպառմանը։ Փաստորեն ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում էլեկտրաէներգիայի սպառման ավելացման հետ միասին հանրապետության էներգասիստեմը ներկայումս հնարավորություն ունի և՛ լրիվ բավարարել ներքին պահանջները, և՛ էներգիա մատակարարել Անդրկովկասի միացյալ էներգասիստեմին։

Հետպատերազմյան տարիներին էական տեղաշարժեր են կատարվել նաև հանրապետության էլեկտրասպառման կառուցվածքում։ Չնայած էլեկտրաէներգիայի սպառման չափերը արդյունաբերության մեջ 1950—1977 թթ. ավելացել են շուրջ 7,4 անգամ, սակայն վերջինիս տեսակարար կշիռը 1950 թ. 80 տոկոսից 1975 թ. իջել է 65,3 տոկոսի։ Դրան հակառակ տրանսպորտի տեսակարար կշիռը 0,8-ից հասել է 3,2 տոկոսի, իսկ գյուղատնտեսությանը և այլ ճյուղերինը՝ 12 տոկոսից դարձել է 20 տոկոս[7]։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում հանրապետությունում գունավոր մետալուրգիայի ներճյուղային կառուցվածքի կատարելագործումն ընթացել է նոր ենթաճյուղերի (մոլիբդենի, ոսկու արդյունահանման և այլնի) ստեղծման, ելակետային հումքի առավել լրիվ օգտագործման և այլ ուղղություններով։

Որոշակի տեղաշարժեր են կատարվել հանրապետության քիմիական արդյունաբերության ներճյուղային կառուցվածքում։ Ընդհանրապես այս ճյուղի զարգացման բարձր տեմպերի առկայությունը էական ազդեցություն է ունենում արդյունաբերության կառուցվածքի փոփոխման վրա։ Բանն այն է, որ քիմիական արդյունաբերությունը բնութագրվում է թողարկած արտադրանքի օգտագործման տնտեսական բարձր արդյունավետությամբ, միջճյուղային նյութական կապերի բազմազանությամբ։ Քիմիական ինդուստրիայի արտադրանքը դարձել է ժողովրդական տնտեսության նյութական հաշվեկշռի կառուցվածքի կատարելագործման բազա։

Հանրապետության քիմիական արդյունաբերության զարգացման տեմպերը 1950—1965 թթ. գերազանցել, իսկ վերջին 13 տարիներին զիջել են ամբողջ արդյունաբերության զարգացմանը։ 1977 թ. ՀՍՍՀ ամբողջ արդյունաբերության արտադրանքը 1950 թ. համեմատությամբ աճել է 14,4 անգամ, մինչդեռ քիմիական արդյունաբերությանը՝ 30,5 անգամ, իսկ 1965—1977 թթ. դրանք համապատասխանաբար աճել են 2,9 և 2,3 անգամ[8]։ Քիմիական արդյունաբերության ներճյուղային կառուցվածքի կատարելագործման շնորհիվ անհամեմատ բարձր են եղել սինթետիկ խեժերի և պլաստմասսաների, լաքերի

---

6 «Народное хозяйство Армянской ССР в 1975 году», էջ 47, 72։

7 Նույն տեղում, էջ 72։

8 «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», էջ 54։

և ներկերի արտադրության տեմպերը։ Նշված ենթաճյուղերի արտադրանքի արագատեմպ աճման շնորհիվ բարձրացել է նրանց տեսակարար կշիռը քիմիական արդյունաբերության կառուցվածքում։

Հայտնի է, որ քիմիական արդյունաբերությունը խիստ էներգատար է։ Իսկ քանի որ 50-ական թվականներին էլեկտրաէներգիայի արտադրության աճի տեմպերը մեր հանրապետությունում ետ էին մնում ամբողջ արդյունաբերության զարգացումից, հինգերորդ հնգամյակից սկսած որոշ չափով սահմանափակվեց քիմիական արդյունաբերության էներգատար ճյուղերի զարգացումը։ Հայաստանի կոմկուսի XVII և XVIII համագումարներում խնդիր դրվեց զարգացնել քիմիական արդյունաբերության ոչ էներգատար ճյուղերը։

Զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում առաջնահերթ ուշադրություն է դարձվում կենցաղային քիմիայի զարգացմանը։ Ելնելով կենսամիջավայրի մաքրության պահպանման շահերից, փակվել են մի շարք թունավոր արտադրամասեր Կիրովականի քիմիական գործարանում, Երևանի «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումում, դադարեցվել է Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի շինարարությունը։

Հետպատերազմյան շրջանում Հայկական ՍՍՀ արդյունաբերության կառուցվածքային տեղաշարժերի բնութագրիչ դիծը մեքենաշինության և մետաղամշակման ճյուղի տեսակարար կշռի բարձրացումն է։ Այդ տարիներին առաջադիմական փոփոխություններ են կատարվել բուն մեքենաշինության կառուցվածքում։ Վերջինիս կատարելագործումը ընթացել է տեխնիկական առաջընթացի կարևորագույն ուղղությունների կիրառման նյութաառարկայական հիմքը կազմող ճյուղերի արտադրանքի տեսակարար կշռի ավելացման ուղղությամբ։ Մեծացել է էլեկտրիֆիկացման, կոմպլեքսային մեքենայացման ու ավտոմատացման հետ կապված ճյուղերի տեսակարար կշիռը։ 50-ական թվականներին ՀՍՍՀ մեքենաշինության մեջ առանձնապես բարձր էր էլեկտրատեխնիկական արդյունաբերության տեսակարար կշիռը։ Այսպես, 1958 թ. այս ճյուղի ձեռնարկությունները թողարկում էին հանրապետության մեքենաշինության ամբողջ արտադրանքի երկու երրորդ մասը։ Հետագայում, չնայած նշված ենթաճյուղի բաժնի որոշակի կրճատմանը, այն իր դիրքերը չի զիջել մյուս ճյուղերին։ Վերջին շրջանում մեքենաշինության մեջ զարգացման առավել բարձր տեմպեր են ապահովել ռադիոէլեկտրոնային, հաշվողական տեխնիկայի և սարքաշինական ճյուղերը, հետևաբար և բարձրացել է դրանց թողարկած արտադրանքի տեսակարար կշիռը։

Զգալի կարևոր են մեքենաշինության առանձին ճյուղերի ներսում կատարված տեղաշարժերը։ Այսպես, հաստոցագործիքաշինական արդյունաբերության մեջ արագ տեմպերով զարգացել է գործիքաշինությունը, դարբնոցամամլիչային սարքավորման արտադրությունը, էլեկտրատեխնիկական արդյունաբերության մեջ՝ էլեկտրական մեքենաների արտադրությունը։ Փոխվել է բուն հաստոցաշինության կառուցվածքը։ Ոչ միայն ընդլայնվել է արտադրվող հաստոցների տեսականին, այլև բարձրացել է ճշգրիտ հաստոցների տեսակարար կշիռը։ Ներկայումս հանրապետությունում թողարկվող մետաղահատ հաստոցների 40 տոկոսից ավելին ունի բարձր ճշտություն։ Այդ ցուցանիշով Հայկական ՍՍՀ-ն միութենական հանրապետությունների մեջ գրավում է առաջին տեղը։ 1980 թ. բարձր և գերբարձր ճշգրտության հաստոցների տեսակարար կշիռը ճյուղի արտադրանքի մեջ կկազմի 47 տոկոս։

Զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերության ճյուղում, հիմնական արտադրանքի թողարկմանը զուգընթաց, զարկ է տրվել լայն սպառման ապրանքների արտադրությանը։ Եթե 1965 թ. Հանրապետության մեքենաշինության ձեռնարկությունների միայն 12 տոկոսն էր զբաղվում այդ ապրանքների թողարկմամբ, ապա 1970 թ.՝ 43 տոկոսը, իսկ ներկայումս՝ երեք քառորդից ավելին։

Հանրապետությունում կապիտալ շինարարության մասշտաբները պայմանավորված են շինանյութերի արդյունաբերության զարգացման տեմպերով։ Հետպատերազմյան շրջանում նկատելի առաջընթաց է կատարվել նաև արդյունաբերության այդ կարևոր ճյուղի զարգացման բնագավառում։ Այստեղ նույնպես առկա են առաջադիմական տեղաշարժեր ներճյուղային մասշտաբով։ Ցեմենտի, հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների, շարվածքի նյութերի, ծածկանյութերի արտադրության ավելացումը նպաստել է շինարարության նյութական բազայի ամրապնդմանը, դրանց տեսակարար կշիռների բարձրացմանը ամբողջ շինանյութերի արդյունաբերության կառուցվածքում։

Շինարարության ինդուստրացման պրոցեսի ծավալման պայմաններում առանձնապես բարձրացել է հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների կշիռը, որն արդյունք է դրանց արտադրության արագատեմպ զարգացման։ Մինչ 1955 թ. Հանրապետությունում հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաներ գրեթե չէին օգտագործվում, իսկ 1955 թ. արդեն յուրաքանչյուր 100 հազար ռուբլու շինմոնտաժային աշխատանքներում կիրառվում էր 30 խմ երկաթբետոնե կոնստրուկցիա, 1960 թ.՝ ավելի քան 220 խմ։ 1960—1977 թթ. Սովետական Հայաստանում հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների և դետալների արտադրությունն ավելացել է 5 անգամ[9]։

Ներկայումս Հանրապետությունում զարկ է տրվում այնպիսի կարևոր արտադրատեսակների արտադրությանը, ինչպիսիք են տուֆի, ֆիլզիտի, մարմարի սալիկները։ Շինարարական հումքի ոչ հանքային տեսակների և առանձնապես թեթև լցանյութերի, տուֆի, հրաբխային խարամի, պեռլիտի հարուստ պաշարների առկայությունը շինանյութերի արդյունաբերության վերելքի ապահովման կարևոր պայման է։ Չնայած ունեցած վիթխարի հումքային ռեսուրսներին, վերջին շրջանում շինարարական ինդուստրիայի զարգացման տեմպերը Հայկական ՍՍՀ-ում զիջել են ամբողջ արդյունաբերության զարգացմանը։ Դրա պատճառը արտադրական նոր օբյեկտների շինարարության տեսակարար կշռի նվազումն է, երբ ավելի շատ միջոցներ են ուղղվում արդեն գործող ձեռնարկությունների վերակառուցմանը և վերագինմանը։

Քննարկվող ժամանակաշրջանում առանձնապես բարձր են եղել ապակու և հախճապակու-ճենապակու արդյունաբերության զարգացման տեմպերը։ Բավական է նշել, որ 1940—1977 թթ. այդ ճյուղի արտադրանքն իր աճման տեմպերով ավելի քան 10 անգամ գերազանցել է ամբողջ արդյունաբերությանը[10]։

---

9 «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», էջ 59։

10 Նույն տեղում, էջ 54։

Հետպատերազմյան տարիներին կառուցվածքային տեղաշարժեր և միջճյուղային արտադրական կապերի փոփոխություններ են կատարվել նաև Հանրապետության թեթև արդյունաբերության մեջ։ Բամբակյա գործվածքեղենի համեմատությամբ զգալիորեն բարձր են եղել բրդյա, մետաքսյա գործվածքեղենի արտադրության տեմպերը, հետևաբար բարձրացել է նաև վերջիններիս տեսակարար կշիռը ամբողջ թեթև արդյունաբերության մեջ։ Եթե 1940—1960 թթ. թեթև արդյունաբերության համախառն արտադրանքն աճել է 6,1 անգամ, ապա բրդյա գործվածքեղենինը՝ 60,5, մետաքսյա գործվածքեղենինը՝ 11,1 անգամ, մինչդեռ բամբակյա գործվածքեղենինը՝ 4,3 անգամ։ Նույն օրինաչափությունը պահպանվել է նաև 1960—1977 թթ.։

Սպառման վերջնական արդյունք թողարկող ճյուղերի զարգացման տեմպերի գերազանցումը թեթև արդյունաբերության կառուցվածքում վերջին տարիներին կատարված փոփոխությունների բնութագրիչ գծերից մեկն է։ Արագ տեմպերով է աճել տրիկոտաժի և կարի արդյունաբերության արտադրանքը։ Այսպես, 1965—1975 թթ. կարի արդյունաբերության արտադրանքն ավելացել է 3,52 անգամ, տրիկոտաժինը՝ 2,99, մինչդեռ ամբողջ տեքստիլ արդյունաբերությանը՝ 2,07, բամբակե գործվածքեղենինը՝ 1,35 անգամ[11]։ Ճյուղի կառուցվածքում բարձրացել է տրիկոտաժի, կարի, մետաքսի, կաշվի, կոշիկի արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը։

Հանրապետության թեթև արդյունաբերության կարևոր ենթաճյուղերից է գորգագործական արդյունաբերությունը, որը համարվում է ավանդական։ Վերջինիս զարգացումը նույնպես ընթացել է բարձր տեմպերով։ 1977 թ. մեղմոտ արտադրվել է 2566 հազար քմ գորգ և գորգեղեն կամ 1950 թ. մակարդակը գերազանցվել է 142,6 անգամ[12]։

Սննդի արդյունաբերության ճյուղային կառուցվածքը ձևավորվում է մի շարք գործոնների ազդեցությամբ։ Ճյուղի հիմնական խնդիրը բնակչության պահանջմունքների բավարարումն է սննդամթերքի անհրաժեշտ տեսականիով, որն էլ որոշում է սննդի արդյունաբերության կառուցվածքային տեղաշարժերի ուղղությունը։ Վերջինիս ճյուղային կառուցվածքի վրա ազդում է գյուղատնտեսության մեջ արտադրվող հումքի ծավալի մեծությունը, ինչպես նաև արդյունաբերական վերամշակման ոլորտում այդ հումքի ընդգրկման աստիճանը։

Որպես կանոն, սննդի արդյունաբերության կառուցվածքում հիմնական տեղաշարժեր են կատարվել այն ճյուղերի արագատեմպ զարգացման հետևանքով, որոնց արտադրանքի նկատմամբ պահանջարկը մեծ է եղել, արտադրության պայմանները՝ բարենպաստ։ 1950—1977 թթ. Հանրապետության սննդի արդյունաբերության արտադրանքի աճման տեմպերը զիջել են ամբողջ արդյունաբերությանը։ Այստեղ, այլ գործոնների հետ միասին, պետք է նկատի ունենալ գյուղատնտեսության վիճակը, քանի որ հումքի մեծ մասը տալիս է ժողովրդական տնտեսության այդ կարևոր ճյուղը։ Որոշ տարիների անբարենպաստ բնակլիմայական պայմանները ազդել են նաև սննդի արդյունաբերության զարգացման վրա։

---

[11] «Народное хозяйство Армянской ССР в 1975 году», էջ 52։
[12] «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», էջ 59։

ՀՍՍՀ սննդի արդյունաբերությունը միավորում է շուրջ 150 ձեռնարկություններ, որոնց մեծ մասը պատկանում է մսեղենի-կաթնեղենի արդյունաբերությանը։ Մեծ տեսակարար կշիռ ունեն նաև հացաթխման և գինեգործական ձեռնարկությունները։ Կարևոր ենթաճյուղերից են պահածոների, ծխախոտի, գարեջրի, ոչ-ալկոհոլային խմիչքների արտադրությունը։ 1950—1977 թթ. սննդի արդյունաբերության ճյուղային կառուցվածքում բարձրացել է մսի, ձկան, պտուղ-բանջարեղենի պահածոների, գինեգործության, գարեջրի արտադրության տեսակարար կշիռը։

Ինչպես տեսնում ենք, հետպատերազմյան ժամանակաշրջանում հանրապետության արդյունաբերության կառուցվածքում տեղի են ունեցել արմատական որակական տեղաշարժեր, որոնք վկայում են այդ կառուցվածքի միակողմանիության հաղթահարման, նրա էլ ավելի բարգացման ու հարստացման, կոմպլեքսայնության ապահովման մասին։

СТРУКТУРНЫЕ СДВИГИ В ПРОМЫШЛЕННОСТИ АРМЯНСКОЙ ССР В ПОСЛЕВОЕННЫЙ ПЕРИОД

ЛАВРЕНТИЙ АНАНЯН

Резюме

В послевоенный период наиболее высокими темпами развития выделялись машиностроение и металлообработка, удельный вес которых повысился как по валовой продукции, так и по численности работников п основным производственным фондам. В настоящее время машиностроение выпускает более одной четверти продукции всей промышленности республики.

Важное значение имело развитие в республике малоэнергоемких и маломатериалоемких отраслей, которые, будучи трудоемкими, способствуют тем самым решению проблемы занятости трудовых ресурсов. Для внутриотраслевой структуры промышленности характерны следующие основные тенденции развития: в электроэнергетике они связаны с резким повышением удельного веса теплоэлектростанции и созданием атомной энергетики, в химической промышленности—с развитием бытовой химии, в машиностроении—со стимулированием точных отраслей, в промышленности стройматериалоз—с увеличением производства сборных ЖБК и нерудных видов строительного сырья. Таким образом, в послевоенный период произошло совершенствование структуры промышленности республики, была преодолена односторонность и достигнута комплексность ее развития.